

ՊԱՏՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻՍ


Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Իրկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

Ծանոցման տողը
20 անդիսի

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Per. Pere G. Kalenkarian Michitaris Vienne
tengase No. 4

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոշրիւք եւս
չեմ տրոշիր

ՉԸ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդները որոնք ցարդ իրենց բաժնեգրները չեն վճարած, թող հաճին թե՛ փոքր դրամով, միայնակով թե՛ տարեկանով կը լրացնայ:

ՈՒՂԻՆ ՃԵՂԵՆՔ

Մեր ազգային դատի յաջողութեան հասար յեղափոխական, ներքէն ճեղք առնուած միջոցները քաղաքական ներկայ պայմաններուն համապատասխան կը գտնուին շատերէ: Ոմանք կրտսն թէ՛ մեզ սահմանակից Ռուս հզօր պետութիւնը քանի որ չուզեր հայաստան բարենորոգութիւն, պէտք չէ մեզ զինեալ յեղափոխութիւն՝ որը աւելի աղէտաբեր կըլլայ: Յեղափոխական դասակարգ մըն ալ կըսէ թէ՛ պէտք է ընդհանուր ապստամբութեան պատրաստուիլ, և զգուշանալ մասնակի շարժումներէ, որոնք տասնեակ տարիներէ ի վեր միայն աղէտ պատճառեցին: Մաս մըն ալ կայ՝ որ յամառ բար կուզէ շարունակել զինեալ մասնակի շարժումները: Իսկ ուրիշներ՝ ազգին անունովը խօսող ու գործողներու այս հակասական ընթացքը աչքի առնելու առնելով, շուտաւազ ու շուտաւազ չեն կարող այս ուղիներէն մին կամ միւսը ընտրել: Դրովհետեւ, անոնց և ոչ մին գէպի փրկութեան հանգրուանը անկասկած առաջնորդելու ապահովութիւնը չը ներշնչէ իրենց: Անգին ոմանք ալ ամեն գործողութիւն կարհամարհեն ու միայն դիւանագիտական ճամբով բան մը կրնալ ընելու տար: Եւ յայտնի կը սնանին:

Վերջապէս, անոնց ամեն ազգին վիճակին բարեփոխութեան անկեղծ ցանկացողներ, ճշմարիտ հայրենասէրներ ըլլալով հանգրծ, իրենց կարծիքէն, իրենց ուղղութենէն տարբեր չաւոր հետեւողները ոչ թէ միայն չքաղաքեցող, այլ անոնց արգելք ըլլալու, զանոնք անուանարկելու, դաւաճան ու ազգա-

կործան կոչելու չափ առաջ կերթան: Այս կերպով ծնունդ կառնէ այն բարեկրօնային խառնակութիւնը՝ որ այսօր կը տիրէ մեր մէջ: Ոչ մէկերնիս իրարու լեզուէ չենք հասկնար ու մինէ մէկ մասն ալ ետադիւրացար չը հասկնար կը կեղծէ: Այս դասակարգերու ամենն ալ իրարու սխալները շատ լաւ կը տեսնեն ու բնաւ չեն քաշուիր երեսի զարնել: Բայց չեն կրնար իրենց առանձին հետեւած ուղիին բուն նպատակակէտը, ազգային դատին յաջողութիւնը ապահովարար ձեռք բերելու կարող ըլլալը դրապէս փաստաբանել: Այո՛, բաներ մը կըսեն, բայց իրենք ալ չեն համոզուած ներքնապէս իրենց խօսքերուն ճշմարտութեանը:

Իրաց այս սխալ ու անստորգիծակից մէջ, մենք կըսենք թէ ոչ մէկ կուսակցութիւն և ոչ մէկ խումբ կամ դասակարգ թող չը յաւակնի պնդել թէ իր կտրածը, իր ծրագիրը և կամ իր ընտրած ուղին փրկութեան առաջնորդող միակ ուղին է: Եթէ այդպէս իսկ ըլլայ, այսինքն թէ այսինչ խումբին ընտրած ուղին փրկութեան միակ ուղին իսկ ալ լինի, պէտք է լաւ համոզուիլ թէ՛ ազգին միայն մէկ փորձարկմանութեան ուժը չը պիտի զօրէ որ իր գէժ ելած ներքին ու արտաքին խոչնդոտները առաջնորդ կը խոտելով այդ ուղիին ծայրը հասնի յաջողի: Հետեւապէս, թէ՛ փրկութեան ճշմարիտ ուղին որոշել կրնալու և թէ՛ այդ ուղիէն յաջողականօրէն անցնելով նպատակակէտը հասնելու համար, ընդհանուր բարոյական ու նիւթական ու ինչ համախմբութիւն անպատճառ պէտք կայ:

Ահա հոս հարց կը ծագի թէ ի՞նչպէս կարելի է ազգին տարակարծիք և հակընդդէմ դասակարգերու կառնունքը ներկայացուցիչներու ուժերը ի մի բերել:

Այս հարցին կը ջանանք հետեւեալ կերպով պատասխանել:

Երբ հարցը հայ ազգին գոյութեան կամ չգոյութեան է՝ կենսական խնդրոյն վրայ է, հոն նախ պէտք է դադարի խմբական ու դասակարգային կարծիքի ու գա-

ղափարի մտէն վեճ: Եւ կորոշ, խնդրոյն անհամեմատելիօրէն աւագ կենսականութիւնը և ամբողջ հայ ազգին գէժ ծառայող անյալութիւնը դժուարութիւնները նկատի առնելով, պէտք է սկզբամբ ևս պայման կերպով ընդունիլ միացեալ ուժերով գործելու անհրաժեշտութիւնը: Ասկէ սեղին կը մնայ ազգին ցանկուն կարեկից, լուրջ, խելահաս և փորձառու անձնաւորութեանց սեղանի մը շուրջ հաւաքուիլ, առանց առիւթ քանուսի, առանց քառքի քրտի (գրգռողապէս սա կրկնել պէտք է) նկատողութեան առնել ազգին ու հայրենիքին ողբալի կացութիւնը, թշնամիներուն դիրքը և ուժը, քաղաքական հանգամանքները, պատմական ու փորձառական դասերը ևս: Այս ամենը խոր ուսումնասիրութեան ու զննութեան անցնել յետոյ, անոր համեմատ ճշգրիտ մեր գործելու եղանակը և ուղին: Ոչ թէ այսինչ ու այսինչ կուսակցութեան կամ խումբին նախկին ծրագիրը նոյնութեամբ ընդունելով, այլ ցարդ նոյն նպատակաւ կազմուած շատ մը ծրագիրներ պարպտել, քննել ու գտնել վերջ, վերոյիշեալ պարագաներու ու ուսումնասիրութեան արդիւնքին համեմատ, անոնց մէջէն լաւագոյն յոգուածները առնել, պակասները ամբողջացնել և վերջապէս ըստ կարելոյն անթերի և ընդհանրական ծրագիր մը խմբագրել և անոր գործադրութիւնը պարտաւորիչ հռչակել ամէն հայու:

Մենք կը հաւատանք թէ՛ հայրենիքի փրկութեան գործը, եթէ անգամ մը այս հիման վրայ սկսի, ներքին դժուարութիւնները մէջտեղէ վերնալէ զատ, հայ ժողովրդի ամեն դասակարգը սիրով իր ուժերը տրամադրելի պիտի ընէ Ս. Դատին յաջողութեանը: Եւ օտար բարեկամներն ալ պիտի հրճուին ու քաջալերուին նոր աշխուժող մը մեղ պաշտպանելու, և թշնամին պիտի չլանգան մեր ուժը արհամարհելու մեր անպաշտպան գիւղացիներուն գէժ սաղայելական խաղեր սարքել:

ԳՈՒՐՊԷԹ

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր քաղաքական տեսութիւններէ մէկուն մէջ խօսք էինք արդէն Ֆրանսացի քաղաքական ականաւոր գործիչ Մ. Անաթոլ Լըռօս Պօլիէօի Լ'էօնօրօքէնի մէջ հրատարակած մէկ յօդուածին վրայ, ուր հայկական ու մակեդոնական խնդիրներու կարգադրութեանը համար եւրոպական դեսպանխորհուրդի մը գումարութիւն անհրաժեշտ ստիպողականութեանը մասին կը գրէր: Ստորեւ կը ներկայացնենք նոյն այս հեղինակաւոր հրապարակագիրն մէկ ուրիշ գրութեամբ, նոյնպէս Արեւելքի վրայ ու նոյնպէս Լ'էօնօրօքէնի մէջ հրատարակուած: Եւ ինչպէս թէ՛ հեղինակին նախորդ յօդուածը եւրոպական մամուլին մէջ արձագանգ գտած ու թեր ու գէժ կարծիքներու յայտնուելուն առիթ տուած է ամէն կողմեր:

Կ Ո Չ

ԽԱՂԱՂ ՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՍՆԵՐՈՒՆ

Եւրոպայէն կեանքի ու ապահովութեան մասին երաշխաւորուած ժողովուրդներու վրայ իւրաքանչիւր օր գործուած ոճիրներու սարսափը զիս խորապէս կը խռովէ: Զգայնամբ մը համարուելու վտանգը աչք առնելով, Կեմ կարող լուծութեամբ տանիլ Հայաստանի ու Սահահանիոյ լեռները քերտտին արիւնոտող կոտորածներու չարաշուք տեսիլքը: Եթէ եղեւնագործներու մոլեռանդ կատաղութեանց առաջն առնելու համար բան մը չենք կրնար ընել, գոնէ պարտաւոր ենք, առանց երբեք յօգնելու, անոնց բարբարոսութիւնները մատնանշել ու մէկգի առնել կեղծիքներու այն ծածկոյթը որով իրենց զարհուրելի շահատակութիւնները քողարկելու կը հետամտին: Բայց միթէ իրաւ է որ բան մը ընելու չկարողանանք Եւրոպա-Ֆէօշկի նենգաժէտ տէրոջը զոհերուն համար: Կարելի է միթէ որ, բնաշնչումի այս քաղաքականութեան հանդէպ, Եւրոպան ինքզինքը զինաթափ հռչակէ ու բաւականանայ միայն մէկ քանի դիւանագիտական ունայն դիմում:

ներով: Ինչ. Պետիկի դաշնա-
գիրը ստորագրող վեց մեծ պե-
տութիւնները միմեծ Օսմանեան
Դրան ու Սուլթանին այդ դաշնա-
գիրը յարգել տալու չափ ինքզինք-
նին զօրաւոր պիտի չըզգային:

Ճշմարտութիւնն այն է թէ՛ պե-
տութիւններն, ու ամէն բան ըսե-
լու համար՝ Եւրոպայի ժողովուրդ-
ները՝ Պետիկի մէջ իրենց յանձն
առած պարտականութեանցը գի-
տակցութիւնը չունին:

Ու միմիայն մեծ պետութեանց
ու քաղաքակիրթ ժողովուրդներու
իրենց պարտականութիւնն չէ որ
Եւրոպայի ազգերը բնաւ չեն
զգար. այլ նաեւ անոնք չեն
զգար, Արեւելքի բարեկարգու-
թիւն ու խաղաղութիւն ստանա-
լովը, նոյնիսկ իրենց ապահովու-
թեանը տեսակէտով ունեցած շա-
հերին: Վասն զի, եթէ հալա-
ծանքն ու կոտորածները յարատե-
ւեն, Հայաստանի ու Մակեդոնիոյ
դէպքերը նոյնիսկ Եւրոպայի խա-
ղաղութեան վտանգ կ'ապառնան.
վտանգ, որ անստոյգ թուականի
մը մնալէ՝ աւելի, կրնայ առաջիկայ
գարունին մէջ յանկարծ յայտնուիլ:

Ինչպէս այս էջերուն մէջ իսկ
ցոյց տուինք, 1902ի վերջը Մա-
կեդոնիոյ կացութիւնը տարօրի-
նապէս միտք կը բերէ 1876ի ա-
պրտամարտութեան նախընթաց օրը
Պոսնա-Հէրցեգովինի ունեցած վի-
ճակը:

Հարկ է որ անցեալին բոլոր
դասերը կորսուած ըլլան, ու քա-
ռորդ դարու մը ժամանակամիջոցէ
ետք, Եւրոպան դատապարտուած
ըլլայ տեսնել նոյն դէպքերու նոյն
չփոթութիւնները յառաջ բերելը,
ու արեւելեան պատերազմի մը յա-
ռաջ գալը, որը գուցէ ընդհանուր
պատերազմի մը փոխուէր: Պետու-
թեանց խոհականութեանը վրայ
ինչ վստահութիւն որ ալ կարե-
նանք ունենալ, յանգնութիւն
պիտի ըլլար այդ բանին շատ հա-
ւատ ընծայել:

«Մենք ջրհանկրկներու կը նմա-
նինք. միջամտելու համար մեզի
հրդեհ մը հարկաւոր է» ըսրէ է,
հայ պատուիրակներու՝ ռուսական
նախկին ղեկավար իկնտիէվ զօրա-
վարը:

Այս է միմեծ դիւանագիտու-
թեան վերջին խօսքը. որպէս զի
մարելու տրամադիր ըլլան ամիս-
ներէ ի վեր Արեւելքի մէջ թագնո-
րէն արծարծուող հրդեհը, պէտք
կ'ա՛ր որ Եւրոպան սպասէր այդ
հրդեհին սաստկապէս յայտնուե-
լովը՝ բովանդակ Պալքաններու լու-
ցերու մատնուելուն:

Վերջին շարժումներու մէջ, մէկ
քանի կառավարութիւններ այս
վտանգէն յուզուած ըլլալ կը
թուին: Կիւմացնի թէ, Ռուսիան,
Աւստրո-Հունգարիան՝ Դրան և Եւր-
տրդի զեկուցումներ ըրին Մակե-
դոնիոյ ողբալի կացութեանը վե-
րաբերութեամբ: Պատշաճ է որ
շնորհաւորենք այն պետութիւն,

ներն՝ որոնք վերջապէս որոշեցին
մարդկութեան լեզուն Սուլթանին
ականջին լսելի ընել. ու ցաւ յայտ-
նելու եւք այն պետութեանց ալ,
որոնք Մակեդոնիոյ տառապանք
ները բաւական մեծ չհամարեցին,
որպէս զի այսպիսի դիմումի մը
միանալ վճռէին: Եթէ Ֆրանսան
ալ վերջիններէն եղած ըլլար, ու
իր ջանքերը վերջին պահուն իր
դաշնակցին ջանքերուն սխալուցած
չըլլար, ստորագրում մը պիտի
կրէինք մեր արտաքին գործերու
պաշտօնարանին ու Հանրապետու-
թեան համար:

Բայց երբ պետութեանց մեծա-
մասնութիւնը, նոյնիսկ —ինչ որ
Գերմանիոյ սխալեմանքի ձեռք-
պահութիւնը մեզ չի թողուր որ
յուսանք — եթէ մեծ պետութեանց
ամբողջութիւնը Մակեդոնիոյ ժո-
ղովուրդներուն ինչպստ իր ձայնը
Եւրոպայի պալատին մէջ լսելի ընել
տար, այսօրինակ զեկուցումներ
անբաւական պիտի համարուէին,
նոյնքան այդ խառնակ նահանգնե-
րու մէջ անգործութիւնը վերահաս-
տատելու, որքան Եւրոպայի խա-
ղաղութիւնը ապահովելու համար:

Պէտք կայ աւելի հաստատաւոր
ու աւելի ճշգրիտ քաղաքականու-
թեան մը:

Մենք շատ լաւ գիտենք թէ՛
Դրան ու Պալատը ինչ պատաս-
խան պիտի տան Եւրոպայի յանձ-
նարարութեան. իր նախորդներուն
պէս, Սուլթան համար երբեք իր
խոստումներուն մէջ ճշմարտախօս
չէ եղած. ու բոլոր այն յանձնա-
ռութիւնները՝ զոր պիտի յայտնէ
իր Մակեդոնիոյ կամ Հայաստանի
հպատակներուն համար, ու բոլոր
այն իրաւունքներ՝ զոր բրիտանիա-
ներուն համար պիտի հրամանագրէ՝
երբեք սզատամտութեան ու հան-
դիսաւորութեան կողմանէ պիտի
չգերազանցեն իր Սուլթան-Խալիֆ
նախորդներուն՝ Խալիֆը-Հիւմա-
յուններու մէջ հռչակած յանձնա-
ռութիւնները, որոնց յայտարա-
րութիւնները միշտ մեռեալ տոռ
մնացած են:

Եւրոպայի ականջէն մինչ կ'իլի-
կիոյ անցքերը, ու Չար Տաղի
լեռներէն մինչ Ռուսիոյ կիրճերը,
բրիտանիաները գիտեն կայսերա-
կան խոստումներուն արժէքը. ա-
նոնք շատ անգամ ու շատ երկար
ատեն այդ խոստումներուն գոր-
ծադրութեանը սպասեցին, որ
պէս զի անոնց տակաւին հաւատ
ընծայէին:

Կոտորածները, բանտն ու չար-
չարանքն, առեւանգումներն ու
բռնաբարութիւնները, աւերն ու թա-
լանն անոնց բաւականապէս սորվե-
ցուցին ինչ որ Եւրոպայ-Ֆէօչկի
երեւութապէս բարեացակամ հրա-
մաններուն ներքեւ իրենց համար
քողարկուած կայ: Ոչ նոր բարե-
կարգութեանց աղբարարութիւնը,
ոչ նոր պաշտօնատարներու ան-
ուանուած կարող պիտի ըլլային
զանոնք ապահովել. անոնց վերստին

յոյս ներշնչելու համար, ուրիշ
բանի պէտք կ'ար, եթէ նոյնիսկ
այդ բանը ըլլար Միտհատ փա-
շայի այն պատրիշ ու վաղանցուկ
սահմանադրութիւնը, զոր համար
քայքայելու հետամուտ եղաւ, ու
զոր Եւրոպայի թուրքերու միա-
միտ վստահութիւնը մեզի կը ներ-
կայացնէ իբր գերագոյն բաւաւէ
մը:

Միտհատի սահմանադրութիւնը,
նոյնիսկ եթէ քրիստոնեաներու շատ
աւելի երաշխաւորութիւն չընծայէ
ալ, միշտ Սուլթանին խօսքէն
նուազ մաշուած պիտի ըլլար:

Իրապէս, Մակեդոնացիներուն
համար, ինչպէս Հայերուն համար,
միակ երաշխաւորութիւն մը ու
ապահովութիւն մը կրնայ ըլլալ
Պետիկի դաշնագրին յարգումը:
Թող Եւրոպան Դրան պահանջէ
վերջապէս 1878ի դաշինքին 23րդ
ու 61րդ յօդուածներուն գործադ-
րութիւնը, ու Եւրոպան պիտի ա-
պահովէ միանգամայն եւրոպական
խաղաղութիւնն ու Արեւելքի բրի-
տանիաներուն փրկութիւնը: Այլա-
պէս, Սուլթանին չորս կողմէն դի-
ւանագիտութեան բոլոր գիմում-
ներն ունայն ցոյցբեք անգին չպիտի
անցնին: Ու եթէ ճշմարտապէս
դաշնագրին 23րդ ու 61րդ յօդ-
ուածները գործադրել տալ կուզուի,
այս բանին համար ալ ազգու միակ
միջոց մը կ'ալ, զոր հոս իսկ յայտ-
նեցինք: Արեւելքի խնդիրներու
մասին եւրոպական ղեկավարածողու-
վոյ մը գումարումը: Այս առա-
ջարկութիւնը ռուսական, անգ-
լիական, աւստրո-հունգարական ու
իտալական մամուլ մէկ մեծ մասին
պաշտպանութեանը արժանացաւ.
միայն գերմանական մամուլը, որ-
պէս թէ նշանաբանի մը հետեւէր,
անոր ընդհանրապէս քիչ նպաստա-
ւոր գտնուեցաւ: Չպիտի բսկնք
թէ՛ Մակեդոնիոյ ու Հայաստանի
հարստահարեալներուն վշտի աղա-
ղակները Գերմանիոյ մէջ արձա-
գանք չեն գտներ. այդպէսով մեր
դրացիներուն հանդէպ անիրաւ պի-
տի գտնուէինք. բայց նոյնքան ա-
րեւելեան, որքան հարաւային Աֆ-
րիկէի խնդիրներու մէջ, կայսե-
րական կառավարութիւնը հակա-
մէտ է ցոյց տալու թէ՛ զգացումի
ու մարդկութեան նկատողութիւն-
ները իր վրայ ունէ ազդեցութիւն
զուրկ են:

Ի դէմս խորքիոյ՝ Գերմանիա
կը տեսնէ միայն յաճախորդ մը,
որուն դիրքագրածութեանցը խա-
յելու կը հետամտի, որպէս զի կա-
րող ըլլայ ալ աւելի աղէկ շահա-
գործել անոր հասոյթի ազգիւր-
ներն ու կամակատարութիւնները՝
կարճատեւ քաղաքականութիւն
գուցէ, քաղաքականութիւն որ՝
անօգուտ վեհաձեռնութիւններով ու
մարդկային խղճմտութիւններով
անհանգիստ չըլլալու ձգտելով հան-
դերձ, գուցէ աւելի խոհական ալ
չէ. վասն զի, առաջիկայ ապրիլին
հարստահարեալներու ապստամբու-

թիւնը կրնայ տնոր արեւելի
հերքում մը տալ. ասկէ ետք,
երբ Վիլհելմ Բ.ի բարեկամին գուն-
դերը չի յաջողին Մակեդոնիոյ մէջ
յուսահատութեան ապստամբու-
թիւնը ջախջախել, կրնայ ըլլալ
որ Պետիկն ոչ շատ տհաճու-
թեամբ նկատեն Արեւելքի մէջ
առաջիկայ խառնակութեանց հե-
ռականը՝ որպէս թէ Մակեդոնիոյ
ապստամբութիւնը նոր ճամբաներ
բանար «յառաջ դէպի Արեւելք»ի
(տառակ նախ Օստրլն) ու գերմա-
նական ծաւալումին:

Ինչ փոյթ. հակառակ հարստա-
հարեալներու նկատմամբ Պետիկի
անտարբերութեան, ու հակառակ
գերմանական կառավարութեան
եսամով հաշիւներուն, կարելի չէր
որ համակերպէինք Մակեդոնիոյ
ու Հայաստանի բոլորներու երկար
մարտիրոսութեանը անզգայ վկա-
ներն ըլլալ. գերմանական նորա-
կազմ կայսրութիւնը՝ Եւրոպայի
մէջ ինչ գիրքի ալ տիրացած ըլ-
լալ, դա Եւրոպան ըսել չէ. կրէ-
տէի նոր օրինակը, որուն կացու-
թիւնը Մակեդոնիոյ վիճակին հետ
մէկէ աւելի նմանութիւններ կրն.
ծայէ, մեզի կ'ապացուցանէ թէ.
Արեւելքի մէջ Եւրոպան տակաւին
կը կարողանայ գործել, առանց
Գերմանիոյ արտօնութեանը կամ
գործակցութեանը: Քանի որ դի-
ւանատանց վարանումներն ու Պէռ-
լինի կառավարութեան խուսա-
փումները դժուարութեանց կեն-
թարկեն Եւրոպական Դիսպա-
նախորհուրդը: մը գումարումը,
կարելի չէ՛ր ըլլար գտնել գործու-
նէութեան տարբեր կերպ մը, որը
Արեւելքի հարստահարեալներուն
տառապանքին վերջ դնելով կամ
անոնց վերստին յոյս ներշնչելով
հանդերձ, Եւրոպական խաղաղու-
թիւնը պահպանէր Պայքարներու
սպառնացած վտանգներէն:

Ահա հոս ինձի կը հրաւիրեմ ու-
շագրութիւնը քաղաքագէտներուն,
ու ալ աւելի խաղաղասէրներուն,
խաղաղութեան բոլոր բարեկամնե-
րուն ու միջազգային իրաւունքին
շահագորգաւոր մարդերուն:

ԱՆՏՈՒՆ ԼԵՈՒՍ ՊՈԼԵՏՈ
(Մնացեալը յաջորդող)

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՆ ԱՌԵՒՐՈՊԱ

Այժմ ձեզի համար ոչ նուազ կարի-
ւոր տեսակետի մը կը հասնինք, քանի
որ հակամիւսիւթեան ունէ պաշտա-
մունքի նկատմամբ մեր հակակրանքը
բրիտանիայ Եւրոպայի դէմ մանա-
ւանդ արտակարգ սաստկութիւն մը
կ'առնէ:

Միւս անհաւատները քիչ անգամ մեր
յարձակողները եղան: Բայց բրիտան-
եաները ամէն ժամանակի մեր ամենէն
մոլեգին թշնամիները եղան:

Ձեր խաղաղութիւնները մենք չենք
մոռցած: Անոնք միշտ կը տեսնեն հա-
րիւր անգամ աւելի գարշելի կերպա-
բանքներու ներքեւ:

Դուք մեզի դէմ պայքարեցաք ու մեզի ստորնացուցիք ձեր բոլոր միջոցներովը: Գուք աշխարհի ամէն կէտերուն վրայ Իսլամութեան սահմանները ընկրկեցուցիք: ու այսօր մեզի մնացած քիչ մը բանն ալ ձեր դիւանագէտներուն ու քարոզիչներուն միջոցաւ կազմալուծուի թեան ենթարկելէ չէք դադարիր:

Ձեր ծրագրերը պատրաստուած է գուք յայտնապէս, կանոնաւորապէս Իսլամութեան կործանումը կը հետապնդէք:

Իբր միակ արդարացում, մեզի կը մեղադրէք որ ձեր քաղաքակրթութեան ըմբոստ հըմնանք: Այո՛, ըմբոստ, ու ըմբոստ միջոցաւ մահաբայց ատոր պատճառն ալ գուք, միայն գուք էք:

Այս ամբաստանութիւնը ձեզի կը զարմացնէ. առ սակայն հիմնուած է նշանաւոր իրողութեան մը վրայ՝ որու մասին դուք ոչ մէկ գաղափար չունիք. վասն զի այդ իրողութիւնը Իսլամութեան հոգիին իսկ մէջը անցած է:

Ունկն դրէք, Եւրոպացի՛ մտածողներ: Դէպքը արժանի է ձեր բովանդակ ուշադրութեանը:

Դուք չէ՛ք կրնար ուրանալ յառաջդիմութեանց ասպարէզին մէջ Իսլամութեան սկզբնական քայլերը: Մինչ ձեր համոզէն քրիստոնէութիւնը, միջին դարու խաւարին մէջ թաղուած, կրտապղտկէր գարշելի բարբարոսութեան մը մէջ, մեր Իսլամութիւնը ի՞նչ կընէր:

Հազիւ թէ իր մեծաքանի իւլէմաներուն հանձնարովը կազմակերպուած, մեր Իսլամութիւնը, առաջին անգամը ըլլալով, Ասիոյ մէջ ռաւանդարանքեան ու ազատ ինկուստանց դուռը կը բանալ: Մինչդեռ մեր համալսարանները, նոր ճշմարտութեանց վառարաններ, ձեզի կը բերէին մէկ կողմէ յունական իմաստասիրութիւնը ու միւս կողմէ իրենց գիտական հետազոտութիւնները —մեր նուիրագործուած ասացուածքին համաձայն— Սիննէն Զինաւսան յառաջ կը մղէին, ձեր քրիստոնէութիւնը —ոչ թէ Քրիստոսի կրօնքը— այլ ձեր Եկեղեցիին:

Ըսեն այն անորակելի աստուածագետութիւնը, որ այնքան անողոքաբար յունա-լատինական մեծ քաղաքակրթութիւնը քայլ առ քայլ տիեզերական բանականութեան զարթոնումին առջեւ իր կարգին իր գոյութեանը համարսպառնալիք տեսնելով, յետագործարարիկ քայլ մը կընէր ու յանդգնութեամբ բովանդակ արժանիքը կը պահանջէր նոյն այդ նորածին քաղաքակրթութեան, զոր այնքան հալածած էր:

Ի՞նչ յետոյ, ձեր կղերականներու գրիչին ներքեւ, ժամանակին ազդեցութեամբը ու ձեր իսկ ազատամիտ հանձնարներուն միջոցաւ իրագործուած բոլոր յառաջդիմութիւնները՝ իբր տարածութեան քրիստոնէական յառաջդիմութիւններ կը նկատուէին: Քրիստոնէական արուեստ, քրիստոնէական բարոյական, քրիստոնէական քաղաքակրթութիւն, երկնային ու երկրային բոլոր բարիքները թուեցան ունենալ իբր միակ աղբիւր՝ ձեր Եկեղեցիները միայն, ու իբր միակ ատորկայ՝ ձեր անաններուն պարծանքը միայն:

Այսքան բարձր արժանիքի մը այս ակներեւ յափշտակութիւնը Եւրոպայի մէջ ոչ մէկ ըողր յառաջ բերաւ. ընդհակառակը, այդ բանը գգուեց, ու դեռ կը գգուէ ալ քրիստոնէայ զանգուածները: Բայց միասնական աշխարհին մէջ յուզմունքը խորին եղաւ: Մինչեւ այն օրը, Իսլամութեան Աստուծոյն կողմէնէ պատուիրուած եւ անոր բոլոր մարգարէներուն միջոցաւ քարոզուած յառաջդիմութիւնը կատարելապէս օրինաւոր էր. զայն ու եւ երկրի մէջ որոնելը ու անյայտ դայն իւրացնելը գերազանցօրէն արժանաւոր ձեռնարկ մըն էր: Բայց, այն վայրկեանէն որ յառաջդիմութիւնը Վրիստոսի աստուածութեան ընկերակից ընելու կսկիւնէր, Իսլամութեան ժողովն զայն առ միշտ զգուշելի կը դարձնէին: Ու երբ ձեր քարոզիչները, օգտուելով այն միջոցին Եւրոպայի մէջ անձանթ մեր թոյլտուութեան, յանգցնութիւնը ունեցան մեր երկիրները գայով քաղաքակրթութիւնը Իսլամութեան միակ

Աստուծոյն դէմ իբր Եւրոպոսութեան յաղթանակը հանդիսացնելու, մեր Իւլէմաներուն զայրոյթն ալ չափ ու սահման չունեցաւ. ընդոստացումը անխուսափելի էր. խզուծը կատարեալ եղաւ:

Քրիստոնէական գաղափարին այս անընդունելի յաղթանակին դէմ պայքարանուելու համար, համայն Իսլամութիւնը ամփոփուեցաւ սրտմտեալ բացարձակութեան մը մէջ, անդառնալի կերպով անիծելով ու դատապարտելով միանգամայն Եւրոպան ու քրիստոնէութիւնը, ու այդ պիղծ քաղաքակրթութիւնը զոր անհանդուրժելի քրիստոնէայ քահանայի մը նմանեցուցեր էիք:

ՏԵՅԻՍ ԱՊՏԻԼ—ՀԱՔ ՊԱՆՏԱՍԻ
(Շարունակելի)

ԻՐԱՆԻԱՆԻՔԻ ՊԱՏՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Տ. Ակաւանես, Թրնոյա. — Առանց յայտնի ստորագրութեան ստացուած նամակներ չենք հրատարակել: Անգղանիւս ատարկութիւններէն զգայունները պէտք չէ վնասին: Հանգանակութեան մասնակցողները իրենց ազգային ու բարոյական պարտքը կատարած կըլլան, իսկ հակառակողները իրենց սեւ հոգեւոյն խաղան պատկերը կը ներկայացնեն. այսպիսիները ոչ ստիպել եւ ոչ անուանարկել հարկ է, այլ անոնց արգահատել միայն:

Տ. Զ., Լոնտոն. — Շնորհակալութիւն ձեր բարեկամական զգացմանց մասին: Մեր վերջին թիւերու մէջ միեւնոյն նիւթի վրայ մէկէ աւելի անգամներ գրուած ըլլալով, աւելորդ կը դատենք ձեր յօդուածին հրատարակութիւնը:

Տ. Պ. Պրն., Պրախն. — Ձեր թերթերը շարունակ զրկուած են եթէ ցոյց տուած հասցէիդ մէջ պակաս մը կայ, իմացուցէք որ ուղղենք: 1901 Սեպտեմբեր 1է ի վեր չէք վճարած:

Տ. Ս. Ք. Նիւլ., Պրախն. — Ստացանք նամակդ եւ 20 ֆրանքը: Թիւսպարս յառաջիկայ շաբթու լոյս կը տեսնէ եւ անմիջապէս կը զրկուի:

Տ. Ա. Բ., Բաղրաս. — Պ. Պ. անձը դեռ չտեսնուեցաւ մեզ:

ՍԻՍԼ ՄԸ

Մեր նախորդ թիւը նամակատան յանձնուած ատեն սխալումով մը Պուլկարիոյ մեր բաժանորդներուն 12 թերթ պակաս զրկուած է. ուստի որոնք որ այդ թիւը չեն ստացած թող հաճին երկտողով մը իմացնել մեզ որպէս զի այդ պակաս թիւը զրկենք:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տօպրիչէ մեզ կը տեղեկացնեն թէ՛ քանի մը բարեսէր ազգայինք տեսնելով քաղաքին մէջ աղքատախնամի մը անհրաժեշտ պէտքը, համախմբուած եւ կազմած են Աղքատախնամ Ընկերութիւնը մը. իսկ գործադիր ժողով կազմած են հետեւեալ վեց անձերէն.

- Տ. Յ. Քոթոյան Ատենապետ
- » Ս. Աճէմյան Ատենադպիր
- » Պ. Տէրիմէնճեան Գանձապետ
- » Ե. Նուրմանեան Անդամ
- » Ա. Մինասեան »
- » Մ. Աճէմյան »

Սոյն գործադիր ժողովը հրապարակաւ հրաւեր կը կարգադրուէր իւր հայ հասարակութեան որ չը զլանայ նուիրատուութիւններով աւելցիլ իրեն, տեսնել եւ կարօտ աղքատաց օգնութեան հասնելու մարդասիրական այս ձեռնարկին մէջ. — Ի լրոյ կը տեղեկանանք թէ Տ. Սիրաք Մարգարեան՝ որ քանի մը ամիսէ ի վեր Տօպրիչի ազգ. վարժարանի ուսուցչութիւնը ստանձնած էր, քահանայ պիտի ձեռնադրուի տեղւոյն եկեղեցւոյն վրայ: Տօպրիչիք այս նպատակին համար արդէն 500 ֆրանքի չափ գումար մը իրեն տրամադրելի ըրեր են:

— Տփղիսի վիճակին նախկին Աւաջնորդ՝ Դեր. Տ. Գէորգ Արք-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(39)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍԵ ԵՐՐԱՐԴ

ՊԱՏՏԱՍԻԱՆ ԻՊԻՏԻՔԸ

Վերաւոր մարդը սարսաղին նայուածքով մը դիտեց իր վրայ գուրգուրացող աւազակներն ու գլուխը շարժելով ըսաւ.

— Չէ՛... Գուք աւազակներ չէ՛ք... Գուք գէշ մարդիկ չէ՛ք:

Առ միջոցին արտասուելու ձայն մը լսուեցաւ:

— Ա՛խ, կնոջս ձէնն է... մրմնջեց վիրաւորը:

Արդարեւ խեղճ կինը չկրնար չհամբերել, հակառակ խումբին խնդրանաց, մանուկը հեռն առած ապառաժներէն վար իջած էր ու վազելով գէպի առուսինը կուգար:

Օ՛հ, տխուր էր տեսարանը...

Մանկամարդ կինը լալով ինկաւ ամուսնոյն գիրկն ու մրմնջեց.

— Ի՞նչ եղար, Ավո՛, ի՞նչ եղար...

— Ազգէկ եմ... Աստուած էս աղաներու արեւը պահէ՛, թոթովեց վիրաւորը՝ խորին դառնութեամբ:

— Ո՛հ, աղանե՛ր, Աստուած ձեր արեւը պահէ՛, կրկնեց թշուառ կինը:

— Հիմակ գէպի ո՛ւր պիտի երթաք, հարցուց Պատրիկ:

— Էս տեղէնս:

— Այո՛:

— Մեր գիւղը:

— Ո՛ւր է ձեր գիւղը:

— Հեռու է...

— Կրնամ քալիլ:

— Ցաւերս դադրեցան... կրնամ քալիլ:

— Ես երկու մարդերս կը գնեմ ձեզի հետ: Առանց վախնալու շարունակեցէ՛ք ճամբանիդ: Բայց չըլլայ որ այս գէպերը մէկու մը պատմէք: Ահա՛ քիչ մը զեղ կուտամկոր վէրքերուդ վրայ ցանէք: Մի՛ վախնաք, վառնաք: Երբ չեն վէրքերդ:

Ու Պատրիկ իր ընկերներուն պատուիրեց որ ընկերանան այդ խեղճ ընտանիքին. իսկ ինքը վերադարձաւ խումբին քով:

Պատրիկի սիրտը լեցուած էր ու կը յիշէր թըշուառ գեղացիին խօսքերը:

— Ա՛խ, սպաննեցին զիս որ կրնա խլէին ձեռքէս, ըսած էր վիրաւոր մարդը:

Ահա՛ ամենէն քստմնելի վատութիւնը:

Այսպէս, տխուր մտածումներով ապառաժին տակը նստեցաւ ու բնա՛ւ չխօսեցաւ:

ՀԻՒԱՆՊԸ

Դուրսը ցուրտ հով մը կար: Ծառերը կը խշխշային՝ իրենց դեղնած ու իյնալու մօտ տերեւները չորսդին ցանելով: Երկինքը մութ ու բայդ ամպերով կը ծածկուէր:

Վանայ Այգեստան կոչուած արուարձանին «խորհրդաւոր տունին» մէջ հիւանդ մը կար, որ երկու շաբաթներէ ի վեր անկողնոյ կը ծառայէր:

Այդ հիւանդը մանկամարդ Լուսինն էր:

Անոր մահճակալին վերեւը, ձեռքը ճակտին դրած ու խորին կսկիծի մը մէջ թաղուած՝ կը կենար եւ ըրտասարդ մը, որ Վանականն էր:

Լուսինա՛ գլուխը ցամաք ու չոր բարձին վրայ հանգեցուցած, մազերը խառնիխառն թողած, աչքերը հմայիկ երեւոյթի մը ներքեւ փակած ու մէկ ձեռքը կուրծքին մօտ դրած՝ կը քնանար:

Վանական կը նայէր անոր տոգոյն բայց հրեշտակային գէմքէն ճառագայթող հմայքին վրայ. կը նայէր այդ տառապած ու տարիններ ի վեր չարարուած աղջկան վրայ. կը նայէ՛ր, այո՛, ու կսկիծը կը խղզուէր իր հոգեւոյն մէջ:

Ժամերով, ժամերով գիտելէն ետքը, ձեռքը մանկամարդ Լուսինայի ճակտին մօտեցուց, որուն վրայ պաղ քրտինք մը կը պլպլար:

(Շարունակելի)

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна